Տէր հայրը բացատրեց այդ խորհրդաւոր ոտնակապի նշանակութիւնը: Պատի միւս կողմում, ասաց նա, ախոռատունն է, որտեղ կապած է նրա որդու նժոյգը. շղթայի միւս ծայրը պատի միջով տարած է ախոռատունը եւ կցած է ձիու երկաթեայ ոտնակապի հետ, որ ամրացրած է նոյնպէս երկաթեայ փականքներով:

— Ինչի՞ համար:

— Նրա համար, որ եթէ ձին տանելու լինեն, շղթան կը ձգոի եւ տէրը կզարթնէ:

— Բայց գողը կարող է այնպէս զգուշութեամբ կոտրել ձիու ոտնակապը, որ ձեր որդին ոչինչ չի զգայ:

— Այդ դժուար է, շատ դժուար է:

— Միթէ՞ դեռեւս գողութիւններ են լինում:

— Լաւ ձիու գողութիւնը՝ տակաւին հին սովորութեամբ՝ մեր կողմերում յանցանք չէ համարւում, այլ համարւում է մի տեսակ քաջութիւն, ճարպկութիւն, եւ ամօթը վերաբերում է ոչ այնքան գողին, որքան ձիու տիրոջը, որ գողանալ է տալիս: Այդ խայտառակութիւնից ազատ մնալու համար որդիս իր ոտը կապել է ձիու ոտին:

Չնայելով մեր այն օրոայ դժուարին ճանապարհորդութեանը, չնայելով իմ սաստիկ յոգնածութեանը եւ չնայելով, որ գիշերի կէսից անցել էր, բայց ես քնելու եւ հանգստանալու կարիք չէի զգում: Պատրաստ էի ամբողջ գիշերը անցկացնել մինչեւ անգամ ամենադատարկ խօսակցութիւններով, միայն թէ կարելի լինէր սպանել ժամանակը, մինչեւ կը լուսանար, մինչեւ կը տեսնէի նրան... Բայց տէր հայրը իմ հանգստանալու մասին էր մտածում: Իմ անկողինը արդէն պատրաստ էր. հանոեցայ, մտայ տեղերիս մէջ: Բարձերի մօտ դրած էր երկու անօթ, մէկը լի ջրով, միւսը լի գինով, որ եթէ գիշերը ծարաւէի, որից որ կամենայի՝ նրանով ծարաւս կոտրէի: Իմ կշտին անկողին մտաւ տէր հայրը: Նա էլ ինձ նման երկար անքուն մնաց: Բայց նրա անքնութեան պատճառը բոլորովին այլ էր. նա անկողնի մէջ աղօթում էր. ամբողջ «եկեսցեն» պէտք է վերջացնէր, յետոյ քնէր:

Ես մտքով յափշտակուած էի դէպի դպրոցը եւ դէպի նրան կից երկու սենեակները: Այնտեղ եւս երկու անձինք անպատճառ անքուն կը լինէին, Ասլանը եւ վարժապետը: Նրանք կը նստէին, նրանք կը խոսէին մինչեւ լոյս: Ա՛խ, որքան ախորժելի կը լինէր ինձ լսել նրանց խօսակցութիւնը, նայել նրանց վրայ եւ հիանալ: Նա դիտմամբ ընտրեց Ասլանին. նա կամեցաւ առանձնանալ նրա հետ: Ինչո՞ւնդ եւս իր հետ չտարաւ: Միթէ՞ տակաւին նա